

150 տակառայափ ծանրութեամբ չու գեկառք 15 հազարամեդր տեղ տանիլ ծովուն տակէն : փորձը կը ցուցընէ թէ մեքենայէն դուրս ելած օդը գրիթէ կրկին 2000 խորանարդ ոտք պարզ և մաքուր օդ պիտի տայ, — շատ աւելի քան որչափ հարկաւոր է անցորդաց երկայն կառաշարի մը քիմիական սպառման համար :

Շողեկառք պիտի ունենան միշտ չափաւորեալ զօրութիւն մը, որպէս զի կարենան նախատեսել սր և է արգելք մը, որուն կրնան հանդիպիլ ճամբորդութեան ժամանակ : Բայց որպէս զի աւելի ապահով ըլլան շոգեկառք, փոդոյն երկայնութեամբը երկաթէ խողովակներ պիտի դրուին շատ միծնողորտով ճրնչեալ օդոյ ծանրութեամբ լեցուած, և ասոնք տեղ տեղ մէկմէկէ քիչ հեռու աւազաններ պիտի ունենան, որպէս զի զիւրաւ կարենան մեքենայք ճնշուած օդ ամբարել : Ինչպէս այսօրուան օրս կ'ընեն նոյն գործը սովորական շոգեկառք ջրոյ համար :

Սակայն քանի մ'ամիս առաջ մէկ

քանի անգղիացի սպայից տաք վիճաբանութեան նիւթ եղաւ Անցքս, իբրու թէ ասիկա Անգլիոյ թշնամեաց ասպատակութեան ճամբայ մը պիտի ըլլար : Լսրտ Տընսէնի ծովապետն առաջինն եղաւ այս կասկածը հանելու, որուն հետեւեցաւ Սըր Կարնէդ Ռւլլէյ՝ Աշանդաց, Զուլուներուն և Եգիպտոսի յաղթողը, Մեծին Բրիտանիոյ երեւելի զօրապետն : Ուստի սաստիկ վէճ մը զինուորական թերթերու, մանաւանդ թէ բոլոր լրագրոց վրայ և ինչուան անգղիական խորհրդարանին մէջ, 'ի պաշտպանութիւն կամ 'ի հակառակութիւն Անցքին :

Առանց բնաւ պատերազմական գիտութեան և ոչ ալ զարմանալի սրատեսութեան՝ կրնանք կանխատեսել թէ յաղթութիւնն որուն պիտի ըլլայ :

Եթէ յարմար տեղեր քանի մը ականներ գրուելու ըլլան, ինչպէս են Չենի զիոյի փողոյն մէջ, կարծենք թէ կղզեցի պատերազմողներուն երկիւղը կը փարատի, և իրենց գործն ալ անխախտ կը մնայ ցորչափ ախարհս տևէ :

Թորքացաւի դեղ. — Թորքացաւը սաւառիկ ծանր և սովորական հիւանդութիւն մ'ըլլալով, հարկաւոր կը համարինք ծանուցանելու նոր դարման մը ընդդէմ այն մահարեք արտին :

Պ. Տըպոն բժշկութեան ճեմարանին՝ Թորքացաւ ունեցողաց սննդեան վրայ՝ իր դատած մէկ գիւտը ներկայացուց, ուսկից շատ օգուտ քաղած էր :

Տըպոնի գրութեան համեմատ, Թորքախտութիւն ունեցողին պէտք չէ կրտրատեալ, այլ փոշիացեալ միս տալ : Այս փոշին պէտք է լուծել կաթի մէջ, և օրը 200 կրամ մատակարարել : Պ. Տըպոն կը ծանուցանէ փորձով, որ այն ամեն վերնոտներն զորս ինքը խնամած էր իր գրութեամբը 'ի Պիսեդր, քիչ ժամանա-

կի մէջ զգալի գիրացած էին : Ամեն օր իրենց կը խմցընէր 3 լիտր կաթ, 200 կրամ փոշիացեալ միս և չափ մը ոսպ : Իսկ փոշիացեալ մսին գալով, այս է իր գրութիւնը : Հում միսը կը ճնչէ տեսակ մը մամլով, և հիւթը մէջէն կը հանէ, և կը դնէ 'ի պահեստի : մսին մնացորդը կը գրուի վառարանի մը մէջ, յետոյ չորցնելով, փոշիացնելով և նուրբ մաղէ անցընելով, կը դառնայ անշոշափելի փոշի մը, զոր խառնելու է կաթի, հակթի և ուրիշ նիւթոց հետ : Գրեթէ 2 քիլոյ միս կարևոր է 200 կրամ փոշի ստանալու համար : Իրացընէ աժան կերակուր մը չէ, սակայն բերած օգուտը մտածելով՝ գործածութեան արժանի է :